

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 09

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

06.06.2015թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 (հիսունութ) անդամից ներկա էին 45-ը (քառասունհինգ):

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ամբիոնների վարիչների ընտրություններ (հոգեբանության ամբիոն, աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն):

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան,

մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյան

2. Գիտական կոչումներ շնորհելու հարց.

- Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դասախոս, պ.գ.դ., դոցենտ Ս. Պետրոսյան (*պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդ*):
- Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս, մ.գ.դ., դոցենտ Ռ. Մարդոյան (*պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդ*):
- Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մ.գ.դ., դոցենտ Ս. Սողոյան (*պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդ*):
- Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մ.գ.թ. Ա. Վարդանյան (*դոցենտի գիտական կոչման հավակնորդ*):

Հաղ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյան

3. ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ֆակուլտետների դեկանների և ամբիոնների վարիչների ընտրությունների ընթացակարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Զեկ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

4. Կազմակերպական փաստաթղթերի հաստատում:

➤ ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման, կազմակերպման և գնահատման ընթացակարգի հաստատում:

➤ «ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ակադեմիական ազնվության հայեցակարգ

Ձեկ.՝ Բուհի զարգացման ռազմավարության պլանավորման և իրականացման հիմնահարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյան

5. ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման տարակարգի բնութագրիչների քննարկում:

Ձեկ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6. Ընթացիկ հարցեր:

6.1 Ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողովի 2015թ.-ի II եռամսյակի կատարողականի հաշվետվություն:

Հաղ.՝ Ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյան

6.2 «Միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների երկրաչափական ոչ գծային տեսությունը»՝ պետբյուջեով ֆինանսավորվող 13-2c154 թեմայի անփոփիչ հաշվետվությունը՝ (01.07.2013թ-30.06.2015թ):

Ձեկ.՝ թեմայի գիտական ղեկավար ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԳՊՄԻ-ի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Սամվել Հովհաննեսի Սարգսյան

6.3 Անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Հեղինե Յոլակի Իսահակյանի «Концептуальный анализ текста: теория и практика» վերատառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՍԵՑԻՆ.- Ինստիտուտի հոգեբանության ու աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների վարիչների ընտրություններ:

Ամբիոնների վարիչների թափուր տեղերի թեկնածուների ցուցակը ներկայացնելուց հետո Վ. Գրիգորյանը խոսքը փոխանցեց ինստիտուտի մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանին, ում հաղորդմամբ՝

ա/ հոգեբանության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, հ.գ.թ., դոցենտ Կարինե Արամի Սահակյանը,

բ/ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, ա.գ.թ., դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանը:

Ա. Ֆարմանյանը ներկայացրեց համապատասխան ձևայնացված կարգավիճակները զբաղեցնելու համար դիմած թեկնածուների ինքնակենսագրությունները, վերջին 5 տարիների ընթացքում նրանց հրատարակած գիտական աշխատանքների թիվը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոսյանը, բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան Ա. Գրիգորյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Կազմակերպել ի հոգեբանության ու աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների վարիչների ընտրության փակ գաղտնի քվեարկություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահը գիտական խորհրդի անդամներին փակ գաղտնի քվեարկության կարգը ներկայացնելուց հետո առաջարկեց գիտական խորհրդի անդամներից ընտրել առնվազն 3 հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով՝ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Փակ գաղտնի քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Խաչատրյանը հրապարակեց քվեարկության արդյունքները.

N	Թեկնածուի ազգանուն, անուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Սահակյան Կարինե	41	4	0
2.	Մարտիրոսյան Լևոն	43	2	0

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները:

2. ա/Հ.գ.թ., դոցենտ Կարինե Արամի Սահակյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնում:

բ/Ա.գ.թ., դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ.- **Գիտական կոչումների շնորհման հարցը:** Մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանը ներկայացրեց դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներին:

Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներ՝

Nº	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1.	Սարգիս Գարեգինի Պետրոսյան	Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ	Է.00.01 – «Հայոց պատմություն»

2.	Ռուզաննա Մարդոյան	Արամայիսի	Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ	ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»	–
3.	Սպարտակ Սողոյան	Սերյոժայի	Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ	ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»	–

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդ՝

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1.	Արուսյակ Ռաֆիկի Վարդանյան	Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ	ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա /հայոց լեզու/»

Գիտական կոչումներ շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն, որի կազմակերպման համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Արթուր Խաչատրյան, Մանիկ Սարգսյան և Սայաթ Մինասյան:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց փակ գաղտնի քվեարկության հետևյալ արդյունքները.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Սարգիս Գարեգինի Պետրոսյան	43	2	0
2.	Ռուզաննա Արամայիսի Մարդոյան	39	6	0
3.	Սպարտակ Սերյոժայի Սողոյան	43	2	0

4.	Արուսյակ Ռաֆիկի Վարդանյան	42	3	0
----	---------------------------	----	---	---

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր, մ.գ.դ., պրոֆեսոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, կ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ալեքսանյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ս. Սարգսյանը, ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Լ. Ղուկասյանը, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Մ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաշվի առնելով, որ Սարգիս Գարեգինի Պետրոսյանի, Ռուզաննա Արամայիսի Մարդոյանի ու Սպարտակ Սերյոժայի Սողոյանի ներկայացրած գործերը լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ պրոֆեսորի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (6ա), ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա Սարգիս Գարեգինի Պետրոսյանին, Ռուզաննա Արամայիսի Մարդոյանին ու Սպարտակ Սերյոժայի Սողոյանին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում և միջնորդել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան վկայագրով:

2 .Հաշվի առնելով, որ Արուսյակ Ռաֆիկի Վարդանյանի ներկայացրած գործերը լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի

գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա Արուսյակ Ռաֆիկի Վարդանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և միջնորդել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան վկայագրով:

3.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ֆակուլտետների դեկանների և ամբիոնների վարիչների ընտրությունների ընթացակարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Վ. Գրիգորյանը ներկայացրեց փաստաթղթերի փոփոխությունների հետևյալ նախագծերը:

1.«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆակուլտետների դեկանների ընտրությունների ընթացակարգի /հաստատված 2012թ.-ի մայիսի 26-ի նիստում/ 1.2 կետի վերջին նախադասությունը վերաշարադրել հետևյալ կերպ. «Նույն անձը անկախ ֆակուլտետի վերամիավորումից, վերանվանումից կարող է դեկանի պաշտոն զբաղեցնել ոչ ավելի քան երկու հնգամյա ժամկետ անընդմեջ»:

2.«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության ամբիոնների վարիչների ընտրությունների ընթացակարգի /հաստատված 2012թ.-ի մայիսի 26-ի նիստում/ 2.3 կետում /փոփոխված 2013թ.-ի օգոստոսի 8-ին/ կատարել հետևյալ փոփոխությունը. «Նույն անձը անկախ ամբիոնի վերամիավորումից, վերանվանումից կարող է ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնել ոչ ավելի քան երկու հնգամյա ժամկետ անընդմեջ: Նույն անձը կարող է առաջադրվել երրորդ և ավելի անգամ, եթե ունի գիտությունների դոկտորի գիտական աստիճան կամ պրոֆեսորի կոչում»:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, ֆ.գ.թ., դոցենտ Ա. Ֆարմանյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆ.գ.դ.,

պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ս. Սարգսյանը, ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆ.գ.թ., դոցենտ Ա. Մանուկյանը, արհեստակցական կազմակերպության նախագահ, պրոֆեսոր Վ. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ֆակուլտետների ղեկանների ընտրությունների ընթացակարգը /նոր խմբագրությամբ/ և ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ամբիոնների վարիչների ընտրությունների ընթացակարգը /նոր խմբագրությամբ/:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.ԼՍԵՑԻՆ.- Կազմակերպական փաստաթղթերի հաստատման հարցը:

Բուհի զարգացման ռազմավարության պլանավորման և իրականացման հիմնահարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյանը ներկայացրեց 2 կազմակերպական փաստաթղթերի՝ ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման, կազմակերպման և գնահատման ընթացակարգի և ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ակադեմիական ազնվության հայեցակարգի ելակետային դրույթները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել.

1. ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման, կազմակերպման և գնահատման ընթացակարգը,
2. ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ակադեմիական ազնվության հայեցակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման տարակարգի բնութագրիչների քննարկում: Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը ներկայացրեց մշակված կարգի հիմնական դրույթները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Մ.գ.դ., պրոֆեսոր Վ. Գրիգորյանը, ա.գ.թ., դոցենտ Լ. Մարտիրոսյանը, ինֆորմատիկա մասնագիտության մագիստրատուրա I կուրսի ուսանող Կ. Հովեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման տարակարգի բնութագրիչների բարելավման նպատակով առաջիկա 2 շաբաթվա ընթացքում հանդես գալ գրավոր առաջարկություններով:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր:

6.1 ԼՍԵՑԻՆ.- Ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողովի 2015թ.-ի II եռամսյակի կատարողականի հաշվետվությունը:

Ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյանը ներկայացրեց իրականացված աշխատանքների բնույթը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյանը, ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Ս. Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Տեղեկատվությունն ընդունելի գիտություն:

6.2 ԼՍԵՑԻՆ.- Թեմայի գիտական ղեկավար ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԳՊՄԻ-ի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Սամվել Հովհաննեսի Սարգսյանի զեկուցումը «Միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների երկրաչափական ոչ գծային տեսությունը»՝ պետբյուջեով ֆինանսավորվող 13-2c154 թեմայի անփոփոխ հաշվետվության՝ (01.07.2013թ-30.06.2015թ) մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ֆիզիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր՝ Հ. Դրմեյանը, ինստիտուտի գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, դոցենտ՝ Ա. Ֆարմանյանը, ինստիտուտի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ պրոֆեսոր Ս. Ալեքսանյանը, ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր՝ Վ. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել 13-2c154 պետբյուջեով ֆինանսավորվող «Միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների երկրաչափական ոչ գծային տեսությունը» թեմայի վերաբերյալ գիտական ղեկավար ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Սարգսյանի կողմից ներկայացված ամփոփիչ հաշվետվությունը՝ նշելով, որ հաշվետու ժամանակահատվածում գիտահետազոտական խմբի կողմից լիովին կատարվել են թեմայի՝ օրացուցային պլանով նախատեսված բոլոր աշխատանքները. հանրապետական և միջազգային ճանաչված գիտական ամսագրերում և միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուներում հրատարակվել են բազմաթիվ հոդվածներ, պաշտպանվել է մեկ թեկնածուական ատենախոսություն, ամբիոնում կատարվում է ևս երեք թեկնածուական ատենախոսություն և երկու դոկտորական ատենախոսություն:

Թեմայի ֆինանսական միջոցները ծախսվել են ֆինանսական նախահաշվի դրույթներին համապատասխան:

Հաշվետվությունը երաշխավորվում է ներկայացնելու ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտե:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.3 ԼՍԵՑԻՆ.- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի հաղորդումը անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ Հեղինե Յոլակի Բսահակյանի «Концептуальный анализ художественного текста: теория и практика» վերաառությամբ ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ Հեղինե Յոլակի Բսահակյանի «Концептуальный анализ художественного текста: теория и практика» վերաառությամբ ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 45 անդամ. կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Թ. ԽԱՉԱՏՐՅԱՆ